տը, որ ժողովին մասնակցում էին ներկայացուցիչներ Հայաստանի զանազան վայրերից: Այդ հանգամանքը պերճախօս ապացոյց է առ այն, որ Հայաստանի ազատութեան գաղափարը Զուղայեցու օրով այնքան ժողովրդականացած էր, որ կարողանում է իր շուրջը համախմբել զանազան դաւառների ներկայացուցիչներին: Թէեւ չմոռանանք խսկոյն աւելացնել, որ այդ ներկայացուցիչները — ամենայն հաւանականութեամբ — այսօրուան իմաստով ներկայացուցիչներ չէին, ընտրուած որոշ շրջանների կողմից եւ նրանց կարծիքների ու ցանկութիւնների թարգմանը. նրանք մասնակցում էին ժողովին անհատապէս. բայց որովհետեւ նրանցից իւրաքանչիւրը այս կամ այն շրջանի գլխաւորն էր, դրանով էլ նրանք ներկայացնում էին իրենց շրջանները:

1678 թ. ժողովը — ինչպէս տեսնում էք — նման մի խնդիր լուծելու համար, ինչպիսին է Հայաստանի ազատութեան խնդիրը, չափազանց սակաւամարդ էր, կազմուած պատահական ձեւով եւ միեւնոյն ժամանակ նաեւ շատ գաղտնի: Դրա պատճառը ոչ թէ այն էր, որ Հայաստանի ազատագրութեան գաղափարը ժողովրդականութիւն չունէր մեզանում —ինչպէս սխալմամբ այդ փաստից կարող են եզրակացնել շատերը — այլ վախն էր, վախը ե՛ւ տիրող պարսիկներից, ե՛ւ դաւաճան ու անպիտան հայերից:

Այդ վախը մենք տեսանք Միքայէլ Սեբաստացու օրով, որի պատճառով ամփոփուած էին նրանց ձեռքերը եւ պապանձուած՝ լեզուները: Տեսնում ենք եւ Զուղայեցու օրով, որի պատճառով աշխատանքները կատարւում են ծայրայեղ զգուշաւորութեամբ: Կը տեսնենք նաեւ Իսրայէլ Օրիի օրով, որի պատճառով Օրիի եւ իր բոլոր գործակիցների գործունէութիւնը գաղտնիութեան քօղով է ծածկուած:

Մի փոքրիկ կտոր Գանձասարի Եսայի կաթողիկոսի նամակից — գրուած 1721 թ. Մինաս վարդապետին — կարծում ենք բաւական է որոշ գաղափար տալու տիրող վախի մասին. «Ցառաջմէ առ քեզ բերան առ բերան ասացեալ եմ եւ թղթով եւս ծանուցեալ եմ, իբր թէ մեք ի մէջ օձից բնակիմք, չեմք կարող զամենայն խորհուրդ եւ սրտի խղճ մեր կատարելապէս գրել ամենուրեք, զի քեզ յայտնի է հայոց ազգի չարութիւն, որ մատնութենէ ի զատ բան չգիտեն. մանաւանդ մեր թշնամիք եւ հակառակք անչափ կան եւ որպէս դու իսկ գրեալ ես՝ թէ Զուղայեցիք, թէ էջմիածնեցիք, թէ չամախեցիք: Աստուած մի արասցէ, որ այս թղթոց մէկն նոցա ձեռն անկանի. այլեւս հոգով մարմնով զերծանելու հնար չկայ»1):

Էջմիածնի ժողովը — ինչպէս վկայում են բոլոր փաստաթղթերը — համաձայնում է անդամ հայոց եկեղեցու անկախութիւնը զոհաբերել ժողովրդի ազատագրութեան գործին — եթէ դա պահանջուի իրենցից: Փրկութեան միայն մէկ ճանապարհ է տեսնում — Արեւմուտքի, գլխաւորապէս Պապի օգնութիւնը: Ուստի, ընտրում է մի պատգամաւորութիւն կաթողիկոսի գլխաւորութեամբ, 3 հոգեւորական եւ 3 աշխարհական անդամներից բաղկացած, որը գաղտնի պիտի անցնէր Եւրոպա՝ Պապին, գերմանական կայսրին եւ ռուսաց թագաւորին դիմումներ անելու:

Մեզ թւում է, որ պատգամաւորութիւնը Պոլսում պիտի բաժանուէր երկու մասի, որոնցից հոգեւորական պատգամաւորները, կաթողիկոսի գլխաւորութեամբ, պիտի գնային Արեւմտեան Եւրոպա, իսկ աշխարհականները՝ Ռուսաստան:

Այս ենթադրութիւնը մենք անում ենք, հիմնուելով մէկ կողմից՝ այն խնդրագրի վրայ, որ Անգեղակոթի պատմական ժողովից յետոյ — Օրիի հրաւիրած — հայ մելիքների կողմից ներկայացուեց Պետրոս Մեծին (Եղեան, «Պետրոս Մեծի յարաբերութիւնները» փաստ., թիւ 6): Այնտեղ յիշատակուած է էջմիածնի ժողովը եւ պարզապէս ասուած. «Ընտրեցաք զ (3) իշխան, որ գան առ ձեր բարի թագաւորութիւնն եւ խնացնեն զմեր խորհուրդն»:

Այս վկայութիւնը մեր կարծիքով՝ պէտք է միանգամայն վստահելի համարել, որովհետեւ նախ՝ էջմիածնի ժողովականներից մէկը, Եավրի որդի Աղաջանը, լինելով նաեւ Զուղայեցու պատգամաւորութեան մէկ անդամը, ինքն էլ ստորագրել է Պետրոս Մեծին ներկայացուած վերոյիշեալ խնդրագրին եւ ուրեմն,

---

1) Աշ. Յովհաննիսեան, «Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը», էջմիածին, 1921, փաստ., թիւ 15: